թիւն հաւատոյ, բերէ առ արքայ Մա-ղաղակ ՚ի Մծբին Յոյն և Պարսի գրով" Խոր. գիրք Ա. գլ. Թ.

Արդ և ինքն ևս կ՚առնու մեր ազգին պատմութիւնը այսպէս ասելով. "Յորմէ մեր հաւատոյ ՚ի վերայ հաստատ կարգի զրուցացս, երկրորդեմք . . ձգելով զմեր բնիկ նախարարութիւնս մինչև ցքաղդէացւոց Սարդանապաղոյ". Նա այսպէս կ՚թողու Խորենացին մեր հայ ազգին ճշգրիտ պատմութիւնը, յորմէ բոլոր յետագայ ազգային պատմագիրք իրենց պատմութիւնը կ՚սկսին.

Ահա այս հաւատոյ աղբիւրէն կ՚առնունք այժմ մեր խնդրոյ հաւատութիւնը, որ Հայկ հսկայից մէկն էր, ինքն ևս դից երևելիներէն լինելով, անհեթեթ յաղթանդամ ու վիթխարի էր մարմնով. նա ևս հսկայից հետ "յղացեալ ամբարտաւանութեամբ ձեռն զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեան" յաղթս էր. Բաբիլոնի մէջ արդէն բռնական բաղմութիւն մի էր, ուր Արմենակ իր անդրանիկ որդին ծնած, աշտարակի կործանմանէն ետքը՝ քակուելով Բելայ հնազանդութենէն կ՚գայ Հայաստան իր բոլոր ազգովն. զոր հատարակ թուականս կ՚համարին յամի աշխարհի 1893. կամ 2107. ամենախ քան զՔրիստոս.

Զայս կ՚գրէ և Սամուէլ անեցի ժամանակագիրը որոյ գրուածը մեր ոճոյն յարմարելու համար կ՚երկրորդեմք այստեղ.

• "Թորգոմ ծնաւ, կ՚ասէ, զՀայկն, այս Հայկը այն հսկաներէն էր, որք ամբարտաւանութեան հոգւով աշտարակաշինութեան ամբարիշտ խորհուրդը ծնան, որոնք աշտարակը կործանուելէն ետքը լեզուները բաժանուելով, երբ որ մէկ մէկու խօսք չէ՛ հասկցան, խոլխոտանօք մէկ մէկու վրայ տիրել ուզեցին, սա գլուխ վերցուց Բելայ դէմ նորան չհնազանդելու, որ ուրիշներու վրայ բռնութիւն ընելու սկսել էր. այս պատճառաւ Հայկ իր Արմենակ որդին առնելով, զոր Բաբելոնի մէջ ծնաւ, երեք հարիւր հոգւով և իրեն ընկերացած ուրիշներու հետ մէկ տեղ չուեց եկաւ յԱրարատ. այն տեղ լեռնոտի մի մէջ իրեն սեպհական տուն շինելով, կ՚թողու զայն իր Կադմոս թոռին. իսկ ինքը Հայաստանի դէպ ՚ի հիւսիսային արևմուտքը գնալով, այն կողմերը կը կոչէ Հարք, ուր Բաղաք մի ևս շինելով, կ՚անուանէ Հայկաշէն.

Հորունակեան.

---

Ըստ կանոնաց խմբագրութեան Արարատ ամսագրիս կ՚հրատարակեմք ահա՛ զայնըս ՚ի գիտութիւն Ազգայնոց, յետ հաստատութեան ՚ի Վեհափառ Կաթուղիկոսէն՝ ստորագրութեամբ Անդամոց Ս. Էջմիածնի.

Կանոնք խմբագրութեան Արարատ Ամսագրին.

ա. Արարատ անուն ամսագիրն պարտի հրատարակիլ ամսոյ յամսս աշխատութեամբ միաբանից սրբոյ Աթոռոյս.

բ. Անդամք Արարատ Ամսագրին են ութն անձինք, որոց վերայ հարկ անցուցեալ եղեալ պաշտօնդ զնիւթ մատակարարելոյ.

գ. Այլք ի միաբանութենէս. որք ձեռնհասք են ի շարագրել կամ թարգմանել բանից ժողովել, պարտաւոր են ամսոյ յամսս տալ զյօդուած մի կամ զերկուս ի նիւթ Արարատայ եւ արտագրել զնիւթս սրբագրեալս յԱնդամոց Ամսագրոյն

դ. Տեսչութիւն Արարատայ է ի ձեռս խմբագրին այնորիկ. որպէս եւ ընտրութիւն եւ կարգաւորութիւն բովանդակ յօդուածոցն որք մտցեն յամսագիրն. որոց ոճոյն վայելչութեան եւ ուղղութեան նա է պատասխանատու.

ե. Եթէ ոք ի գրագրաց Սինոդի տացէ յօդուած թարգմանութեան ի Ռուսաց կամ յայլ լեզուաց տպագրին անուամբ թարգմանչին.

զ. Բնութիւն Արարատայ է անընդմիջական տեսութեամբ Վեհափառ Հայրապետին որոյ եւ հրամանաւ լինի տպագրի.

է. Տպարանն յանձնեսցի ՚ի տեսչութիւն խմբագրութեան Արարատայ եւ ունիցին իրաւունս քաղելոյ նիւթս յօդուածոց եւ բանասիրական տեղեկութեանց ըստ կարգաւորութեան Ամսագրոյն նիւթոյ, ՚ի գրեանց գրադարանին Աթոռոյս առանց տանելոյ անտի զմատեանսն.

ը. ՚Ի պէտս աշխատութեան Անդամոցն նշանակեսցի վայելուչ գրասենեակ պատշաճաւոր այսոր գործառնութեան.

թ. Միջոց պարապմանց աշխատութեան Անդամոց լիցին զօր ամենայն յերրորդ ժամէ առաւօտուն մինչեւ ցվեցերորդ ժամն.

ժ. Ի գրասենեկի Արարատայ պարտին զտանիլ բոլոր հայերէն օրագիրք, ամսագիրք, տպագրեալք ի Ռուսաստան ի Տաճկաստան եւս եկեղեցական օրագիրն Ռուսաց.

ժա. Ազգային, կրօնական, պատմական եւ բարոյական նիւթք Արարատայ բաց ի բանասիրականին պարտին շարագրիլ պարզ աշխարհաբառ լեզուաւ.

ժբ. Այն ամենայն օրագրութիւնք Սինոդի սուրբ Էջմիածնի զորս յետ վճռելոյ հարկ է հրատարակել ի վիճակս ի գիտութիւն ազգայնոց, նա մասնաւորապէս տպագրեսցին ամսոյ յամսս յԱրարատ ամսագրին

ժգ. Գրածք ամսագրոյն եւ համակք տեսչութեան Արարատայ առ բաժանորդս կառավարչական մասն Սինոդի սուրբ Էջմիածնի յանձնէ ուղիղ առնել, եւ զբնակայեանն ի նոյին մեղադրանս բաժանորդաց յանուն տեսչութեան յանձն լինի ի գրասենեակ այնորիկ.

ժդ. Զամենայն նիւթ ծախս հոգասցէ վանական կառավարութիւն ըստ ցուցակին հարկաւորեալ նիւթոց առաջարկելոց յԱնդամոց խմբագրին.

ժե. Ամենայն նիւթոց եւ պարագայից տպագրութեան Արարատայ կազմելոց է ցուցակ տնօրէնն առանձին յայլ տպագրելի մատենից.

ժզ. Առաջնորդք ընդհանուր վիճակաց ազգիս Հայոց, փոխանորդք նոցին եւ վանահայրք, զոյով անդամք հոգեւորական ուխտի սրբոյ Էջմիածնի, եթէ առաքեսցեն յօդուածս յանձինց եւ գրաւոր աշխատութիւնս, տպագրեսցին յամսագրին անուամբ առաքողացն.

ժէ. Յետ ընդունելութեան այսորիկ կանոնաց եւ ըստ փոխխորհրդեան ի Վեհափառ Կաթողիկոսէ ամենայն Հայոց, յայտարարութիւն տպագրութեան Ամսագրոյն ունի նախընթացաբար հրատարակիլ առ Ազգս մեր ստորագրութեամբ խմբագրին եւ երկուց օգնականաց նորին.

Անդամք Սինոդի.

Յովհաննէս Ա. Լուսինեանս Սարգսեանց

Թադէոս վարդապետ.